ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

"ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ"
ՊՈԱԿ

REPUBLIC OF ARMENIA

"NATIONAL BUREAU OF EXPERTISES"
S NPO

0004, ք. Երևան, Ծովակալ Իսակովի պող. 24
Հեռ. :(37410) 77-77-10 (+152)
Հեռ./ֆաքս (37410) 77-77-04

24 Admiral Isakov Ave. 0004, Yerevan
Tel: (37410) 77-77-10 (+152)
Tel / Fax: (37410) 77-77-04

ԵԾԴ/1104/02/16
14.11.2017թ

№ 17-0623դ
14.12.2017թ.

Հայցվոր՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
/ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարության տուն 3, հեռ. 52-08-30

Պատձենը՝ պատասխանող ,,Բարսիս,, ՍՊԸ ,
/ ք. Երևան, Արշակունյաց պողոտա, 57/2 հեռ. 011-777000

Պատճենը՝ Երևան քաղաքի Շենգավիտ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր՝ Ա. Չիչոյանին
ք. Երևան, Արշակունյաց պողոտա 24/1, հեռ. 44-7041/

Թիվ ԵԾԴ /1104/02/16 քաղ. գործով 14.11.2017թ.-ի Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի որոշմամբ նշանակվել է դատաշինարարատեխնիկական փորձաքննություն, որը 14.11.2017թ. թիվ 29192/17 գրությամբ 04.12.2017թ.-ին մուտք է եղել ՀՀ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ: Վերջինիս կատարումը հանձնարարվել է շինարարատեխնիկական փորձաքննությունների բաժնի փորձագետներին:

Փորձաքննություն նշանակելու որոշման հետ փորձաքննությանը տրանադրվել է 17 թերթ չհամարակալված, ,,Տեղազննման և հսկիչ չափագրման,, ակտերի նյութերի պատճեններ:

Ծանոթանալով դատավոր՝ Ա. Չիչոյանի կողմից 2017թ. նոյեմբերի 14-ին կայացված ,,Դատաշինարարատեխնիկական փորձաքննություն նշանակելու և գործի վարույթը կասեցնելու մասին,, որոշմանը պարզվեց, որ տրամադրված նյութերի հիման վրա հնարավոր չէ կատարել հետազոտություն և ներկայացնել հետևություններ՝ որոշմամբ առաջադրված ֆինանսների նախարարության ֆինանսաբյուջետային վերահսկողության տեսչության կատարված տեխզննման և չափագրման աշխատանքների արդյունքում կազմված ակտերի տվյալների իրական լինելու վերաբերյալ հարցադրմանը:

Մուտք № 53750-17
19.12 12

Փորձաքննության կատարման համար անհրաժեշտ են լրացուցիչ, ակտերով ներկայացված օբյեկտներում իրականացված քաղաքաշինական ամբողջական կազմով նյութեր, առանց որոնց հնարավոր չէ կատարել որոշման պահանջները:

Տնօրեն Ա. Հովսեփյան

Կատ.տնօրենի տեղակալ՝ Ս. Առաքելյան
շինարարատեխնիկական փորձաքննությունների
բաժնի պետ՝. Ա. Միրաքյան
փորձագետ Ռ.Հակոբջանյան
հեռ. 77.77.10./146/149

ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Փորձաքննություն № 17-0623դ 2017թ դեկտեմբերի 14-ը

Թիվ ԵՇԴ /1104/02/16 քաղ. գործով 14.11.2017թ-ի Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից փորձաքննություն նշանակելու որոշմամբ փորձագետներին առաջադրված հարցերի պահանջները լիարժեք կատարելու համար առաջարկվում է փորձաքննությանը տրամադրել ՀՀ սոցիալական ապահովության նախարարության ,,Երևանի երեխաների խնամքի գիշերօթիկ թիվ 2 հաստատություն,, ՊՈԱԿ-ում 15.12.2011թ. ԲԸԱՀ-ԱՁԲ-2011/1-1 և 21.11.2011 թ. ԲԸԱՁԲ-2011/1-1 պայմանագրերով, ,,Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատություն,, ՊՈԱԿ-ում 21.11.2011թ. ԲԸԱՁԲ-2011/1-1 պայմանագրերով, ,,Կապանի երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատություն,, ՊՈԱԿ-ում 21.11.2011թ. ԲԸԱՁԲ-2011/1-1 և 15.12.2011թ. ԲԸԱՀ-ԱՁԲ-2011/1-1 պայմանագրերով կատարված աշխատանքների՝

1. նշված պայմանագրերի ձեռք բերման լիազոր մարմնի կողմից գնումների գործընթացի իրականացման ամբողջական փաստաթղթերը:
2. նշված աշխատանքների գնման պայմանագրերի օրինակները:
3. պայմանագրերի անբաժանելի մաս հանդիսացող պայմանագրային ծավալաթերթերը;
4. պատվիրատու կազմակերպության պատվերով իրականացված՝ հաստատված, համաձայնեցված նախագծա-նախահաշվային փաստաթղթերը՝ ամբողջական կազմով;
5. պատվիրատուի կողմից ծրագրի իրականացման պատասխանատու նշանակելու հրամանները;
6. նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացությունները;

7. պայմանագրերի շրջանակներում կատարված աշխատանքների ընթացիկ կատարողական ակտերը և ընդունման հանձնման արձանագրությունները;

8. աշխատանքների ընթացքում կազմված միջանկյալ ծածկված աշխատանքների ակտերը և շինարարության վարման մատյանը:

9. պայմանագրային ծավալների փոփոխության համադրման կամ ծավալների ճշտման պատվիրատուի հաստատված արձանագրությունները:

10. ավարտված շինարարության շահագործման ընդունելու հանձնաժողովի ակտերը;

11.համայնքի ղեկավարի կողմից տրված շինարարության ավարտման փաստագրման ակտը;

12. տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման պատվիրատուի կնքված պայմանագրերը;

13.կատարված աշխատանքներով ստեղծված համակարգում շենքը շահագործող կազմակերպության կողմից կամ այլ կողմի ներդրումներով վերանորոգման կամ այլ բնույթի աշխատանքներ կատարված լինելու դեպքում ներկայացնել աշխատանքների ծավալային և տեղադիրքի բնութագրերը ներառող փաստաթղթեր, իսկ աշխատանքների բացակայության դեպքում՝ լիազոր մարմնի համապատասխան տեղեկանք;

14. նկատի ունենալով, որ փորձաքննությանը տրամադրված 17 թերթ չհամարակալված պատճենների /որոնցով ներկայացված է ,,Տեղազննման և հսկիչ չափագրման,, ակտերի նյութերը / մի թերթը որևէ նյութ չի ներկայացնում, 4 թերթերը կրկնօրինակներ են, իսկ ,,Երևանի երեխաների խնամքի գիշերօթիկ թիվ 2 հաստատություն,, ՊՈԱԿ-ին վերաբերվող մասով տրամադված չեն ,,Ծավալային համեմատական տեղեկագրերի, արձանագրությունները, խնդրվում է տրամադրել ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ֆինանսաբյուջետային վերահսկողության տեսչության օբյեկտներում նշված պայմանագրերով կատարված աշխատանքների ստուգման ամբողջական փաթեթը:

Փորձագետ Ռ. Հակոբջանյան